# ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

## Ա. — ՎԿԱՅԱԿԱՆԻ ՎԱՒԵՐԱՑՈՒՄ ՊՈՒԼԿԱՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Տարւոյս մէջ Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի տոմարներուն մէջ արձանագրեցինք պատմական դէպք մը, պատուաբեր նոյն Հաստատութեան եւ նպաստաւոր մեր Հայ Ուսանողութեան։

Աւելորդ չէ հոս յիշել թէ ինչպէս շուրջ 40 տարիներէ ի վեր (1897էն) իտալական Պետութիւնը իր բարձրագոյն վարժարաններու լիկէոնական վկայականներուն համազօր ճանչցած է Մ. Ռափ. վարժարանի վկայականն ալ. եւ այդ մենաշնորհով մեր շրջանաւարտներն իրաւունք կը ստանան ուղղակի պետական համալսարան մտնելու։ Նկատողութեան արժանի է անշուշտ այն բացառիկ պարագան՝ որ մենաշնորհի իսկութիւնը կը կազմէ մեզի համար, այսինքն փոխանակ լատին եւ յոյն լեզուներու՝ մշակումը մեր տոհմային լեզուին, գրականութեան, պատմութեան եւ մատենագրութեան։

Այժմ Իտալական պետութեան մենաշնորհին վրայ կ'աւելնայ ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆՆ ալ, ըստ որում, օտար միջնակարգ վարժարաններու պետական քննութեանց վկայականները վաւերացնելու համար տարւոյս մէջ կազմուած Մասնաժողովին 18 Սեպտեմբեր (Ն. տ.) Թ. 3 որոշումով՝ Վենետկոյ մեր վարժարանի վկայականն ալ համազօր կը նկատուի *պուլկար կիմնազիոնի բէալ բաժնի պետական* վկայականին, որով առանց պետական քննութեան պուլկար համալսարան մտնելու։

## Բ. — ԹԱՆԿԱԳԻՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ Բարիզու իր ներկայացուցիչներուն ձեռքով նուէր ղրկեց Պոլսոյ մէջ երբեմն իր ունեցած «REVUE DES DEUX MONDES»ի հաւաքածոն՝ Վենետկոյ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի Մատենադարանին, Միութեան քսանեւհինգամեակին առթիւ. ազնիւ եւ գնահատելի մտածութիւն երիցագոյն ընկերներու՝ որոնք իրենց կրտսեր աշակերտակիցներուն կ'ուզեն ներշնչել ուսման եռանդը եւ ընթերցանութեան օգուտը։ Հաւաքածոն կը սկսի 1856էն եւ կը հասնի մինչեւ 1903, շքեղ կազմով 280 հատորներ։

Խնդակցութիւն եւ շնորհակալութիւն Մխիթարեան Միաբանութեանս եւ յատկապէս Վարժարանի Տեսչութենէն եւ բոլոր աշակերտութեան կողմէ, մաղթելով ժիր եւ արդիւնալից գործունէութիւն երկրորդ քսանեւհինգամեակի մէջ։

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ Մ'ԱԼ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՆՔԻՍ

Հրապարակաւ խորին շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ մեր նախկին Սան պատկառելի Յովհաննէս փաշա Սագըզի որդի՝ Պրն. Արմենակ Սագըզի, որ վանքիս նուիրեց արեւելեան թանկագին երեք փոքր գորգեր եւ ասղնէգործ աշխատութիւններ։

ՊԵՏ. ԱՆ. ԳՐ. ՏՈՒՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Խորհրդ. Հայաստանի Գրապալատի Վարչութենէն (Պետհր. Երեւան 1934)

*Մկրեան Մ.* — *Վարդումեան Լ.* — Հայոց գրականութեան քրեստոմատիա միջնկրգ. դպր. համար. Ժ. գործն. գինը՝ 6 ռ. 20 կ. էջ 538։

*Թումանեան Յովհաննէս.* — Գեղարուեստական երկեր. (Խմբ. Ե. Չարենցի). (շքեղ հր.) 22 ռ. էջ 370։

*Մեծարենց Միսաք.* — Երկերի լիակատար ժողովածու. 10 ռ. էջ 376։

*Թոթովենց Վահան.* — Ազատներ. 1 ռ. էջ 91։

*ՀՍԽՀ Լուսժողկոմատ.* — Ֆիրդուսի. Բանաստեղծի ծննդեան հազարամեակին նուիրուած ժողովածու (շքեղ հր.) 8 ռ. էջ 26։

*Ֆիրդուսի.* — Ռոստամ և Սոհրաբ. վէպ Շահ-Նամէից. Երգիծանք. Թրգմ. Գէորգ Ասատուր. 6 ռ. էջ 44։

*Չարենց Եղիշէ.* — Երկիր Նայիրի. Պետհր. էժանագին գրքրն. թ. 52-57. (արձակ) 1 ռ. 20 կ. էջ 268։

*Յակոբեան Ս.* — *Մկրեան Մ.* — Հայոց գրականութեան քրեստոմատիա. միջն. դպր. համար. Ը. գործն. 5 ռ. 50 կ. էջ 468։

*Պարոնեան Յակոբ.* — Մեծապատիւ մուրացկանները. Պետհր. էժ. գրքր. թ. 43-45. 75 կ. էջ 150.

*Շիրվանզադէ.* — Վարդան Աճեմեան. թ. 46-47. 65 կ. էջ 125։

*Մանանդեան Պրոֆ. Յակոբ.* — Երատոսթենէսի ստադիոնը և Պարսից ասպարէզը. (հայ-ռուս.) 2 ռ. էջ 68։

*Գուրգէն Յովհան.* — Ստեփան Շահումեանը և Մաքսիմ Գորկին. 50 կ. էջ 117։

*Սիրաս.* — Կեանքի կարօտը. (վէպիկներ) 2 ռ. էջ 230։

— Մամէն ու Աշէն (քրդ. ժողովրդ. պոէմ.) 1 ռ. էջ 32։

*Յակոբեան Յով.* — Ուղեգրութիւններ (Աղբիւրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմութեան) Ա. հտ. ԺԳ-ԺԶ դար. (1253-1581). էջ 502։

*Ամանեան Վ.* — Գուլի-Թափա (ճամբորդական տպաւորութիւններ) 1 ռ. էջ 84։

*Պուշկին Ա. Ս.* — Դրամատիկական հատուածներ Թրգմ. Հախումեան Տիգրան. 1 ռ. էջ 106։

— Գուբբումակի. Թրգմ. Մազմանեան Համբ. 1 ռ. 20 կ. էջ 144։

*Խանջեան Ա.* — Խորհրդ. Հայաստանը Սոց. կառուցման ուղիներով. (շքեղ հր.) 3 ռ. էջ 176։

*Տիգրանեան Ն.* — Անդրեչան. դաշնամուրի համար. երկ 16. 1 ռ.

— Եզրումի կըր պար. (դաշնամուրի համար) 1 ռ. 50 կ.

— Թարս-պար. հայկ. կլոր պար (դաշնամուրի համար. 1 ռ.

*Պալենկոյ Գ.* — Բարիկադներ (Թրգմ. Հ. Մազմանեան). էջ 219։

*Մանանդեան Ս.* — Շինանիւթերի յատկութիւնները Պետհր. գիտ. տեխն. գրքրն. (5-8). էջ 80։

*Պողոսովի.* — ՀԱՄԿ (բ) ԺԷ համագումարը և Հ.Ս.Հ. Մ. պաշտպանութիւնը. էջ 103։

*Ոսկինեկով Մ.* — Ցուցանակ ճարտարագիտական հետախուզութեան. էջ 53։

*Աղաջանեան Գ.* — Ժամանակին և խնամքով ջրել բամբակի դաշտերը. էջ 14։

*Թադևոսեան Խ.* — Խորհրդ. Հայաստանի էլեկտրաֆիկացիան (քարտէսներով). էջ 103։

*Շեպալին.* — Մակրեթ. Պետհր. էժ. գրքրն. էջ 162։

*Կիսելեով.* — Հանրահաշիւ. միջն. դպր. Բ. մաս. (8 և 9. տարի). էջ 198։

*Տոլստոյ Լ. Ն.* — Պատմուածքներ. էջ 56։

*Մարտեան Վահան.* — Սպինոզա և դիալեկտիկական մատերիալիզմ. էջ 165։

*Մելիքեան Վ.* — Պայթեցման գործ. էջ 44։

*Վիշինսկի Գ.* — Պատերազմը և դեմոկրատական պացիֆիզմը. էջ 47։

*Գրձելեան Գ.* — Այգեգործութիւն. Ա. մաս. Բազմացման եղանակներ. էջ 152։

*Էնգելս Ֆ.* — Բանուոր դասակարգի դրութիւնն Անգլիայում. էջ 464

*Մեհրի Հ.* — Վարարում Ա. մաս. էջ 122։

*Փիրումեան Բժ. Քր.* — Պայքար մալարիայի դէմ. էջ 79։

*Գուրուկ-Գանգնուս.* — Երկրաչափութիւն. էջ 203։

— Ակզբն. տեղեկ. երկրաչափ. միջն. դպր. էջ 80։

*Մակսիմ Գորկի.* — Բանաստեղծութիւններ և լեգենդներ. (Թրգմ. Ե. Չարենց). էջ 115։

*Դէմուրեան Ստ.* — Զորս երգ. 75 կ.

Բուսաբանութեան դասագիրք. միջին դպր. էջ 220։

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ. թ. 3-4։

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ. թ. 33 (81)։

ԳՐԱԿԱՆ ՍԵՐՈՒՆԴ. թ. 4-5 (Սեպտ.-Հոկտ.)։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏ. թ. 8. 9. 10. 11։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. գր - գեղ - քննդտ. և տես. հանդէս. թ. 2։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ. թ. 7-8, 9-10։

ԿԱՐՄԻՐ ՖՐՈՆՏ. թ. 7։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՈՒՀԻ. թ. 8. 9-10։

ՀԱՐՈՒԱԾԱՅԻՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐՆԻԿ. թ. 8. 9։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿ. թ. 6. 7-8. 9։

ՄՈՊՐԻ ԴՐՕՇ. թ. 4-5 (18-19)։

ՊԻՈՆԵՐ ՂԵԿ. թ. 5-6-7-8։

ՏԵԽՆԻԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ թ. 9. 10. 11։

ՏԻՐԱՊԵՏԵՆՔ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ. թ. 1. 2. 3. 4։

digitised by A.R.A.R.@

## ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

# «ԲԱԶՄԱՎԷՊ»

### ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ

*որ* **1935** *թուականով իր գոյութեան* **93**դ *տարին կը թեւակոխէ.*

ՀԱՒԱՏԱՐԻՄ *իր սկզբնական հարազատ նկարագրին և միակ սրբազան նպատակին՝ որ է նուիրուիլ ազգային Լուսաւորութեան դատին,* «ԲԱԶՄԱՎԷՊ» *պիտի շարունակէ տալ իր ընթերցողներուն հետաքրքրական և օգտակար ուսումնասիրութիւններ մեր հայկական հին և նոր լեզուի, պատմութեան, մատենագրութեան և տոհմային յարակից գիտութեանց շուրջ, ինչպէս նաեւ գրական–գիտական–բարոյական յօդուածներ։*

*Նկատելով յատկապէս գաղութահայութեան տխուր վիճակը՝ օտարացման սպառնալիքին տակ տագնապալից և կուսակցական պայքարի խոցերով վիրաւոր,* «ԲԱԶՄԱՎԷՊ» *պիտի ջանայ միշտ արծարծել գիտակցութեան ջահը՝ հանդէպ մեր ցեղին հնութեան և փառքերուն, և մարդկային քաղաքակրթութեան պատմութեան նուիրած արժանաւոր ու պատուաւոր բաժնին, ինչպէս նաեւ յարաժամ պիտի ծածանէ սիրոյ և համերաշխութեան դրօշը, յանուն մարդկային և մեր ցեղական եղբայրութեան՝ որ հասարակաց վշտին և նահատակութեան մէջ աւելի ամրացաւ, յանուն բարոյականի և մեր Հայրերու սուրբ կրօնքին, ջանալով միեւնոյն միջոց ներշնչել յարգանք, սէր և զոհաբերութիւն մեր Հայրենիքին հանդէպ՝ որ կը վերածնի, կը վերաշինուի և կը զարգանայ օր ըստ օրէ, և ուր հարկ է որ սեւեռի մեր սիրտն ու աչքը՝ իբրեւ մեր միակ և հարազատ տունն ու տաճարը՝ և մեր ցեղական գոյութեան և զարգացման ապաւէնը։*

«ԲԱԶՄԱՎԷՊ»*ի խմբագրութիւնը նկատի առնելով տիրող տնտեսական տագնապը, ներկայ* 1935 *տարւոյ բաժնեգին կը նշանակէ* **14** ՖՐԱՆՔ ԶՈՒԻՑԵՐԱԿԱՆ *կամ* ԻՏԱԼԱԿԱՆ **50** ԼԻՐԷԹ, *կանխիկ։ Սակայն փոխարժէքը կ'ընդունինք նաեւ իւրաքանչիւր պետութեան դրամով՝ օրուան սակին համեմատ։*

*Կրթական հաստատութեանց, դպրոցներու, ակումբներու, ընթերցարաններու, ինչպէս նաեւ ուսանողներու համար թերթս կը շնորհենք կէս գնով։*

*Ասկէ զատ ո՛ և իցէ զեղչի համար հարկ է կանխաւ յարմարիլ խմբագրութեան հետ։*

*Յօդուած, թղթակցութիւն, բաժնեգին՝ ղրկել ուղղակի հետեւեալ հասցէին.*


Réd. «PAZMAVEB»

St. Lazare VENISE (Italie)